

Անհատիկ չհասարակականացված անհատիկ հատկանիշները, Երկրամասերի խորհրդարանում է կյանքի ու արվեստի փոխարարությունը մասին, «Մարդ որ-
քան շատ է գիտում արվեստի հրաշալիքները, — ասում է նա, — այնքան շատ է սիրում կյանքը: Բակայն, — անմիջապես ավելացնում է նա, — այն արվեստ է ազդեցիկ, որ կյանքի արտադրու-
թյունն է: Ըստ իմ ամենահանձարիկ պատկերների ամենախորն սեպիտաներն են, այսպես են
հոսանքան ու համեմատան արվեստները, մանավանդ արձանագործությունը: Արվեստի ուժը
սեպիտան է, կյանքի նշմարապի արտադրությունը, ահա այն հիմնական նպատակադրությունը, որին
հասնում է մեծ գրողը արվեստի հարցերի շուրջն արած իր երկար խորհրդածություններից հե-
տո: Եթե գրողն իր արվեստով ներգործում է ժողովրդի զգացմունքների վրա, հաղթանակելով նրա
ուժերը, սեպեալով դաստիարակչական հոգեպայծառ նշանակություն, ապա նույնքան մեծ ու ան-
փոխարինելի է ժողովրդի փոխադարձ վերաբերմունքը, նրա անմիջական ու բուռն հետաքրք-
րությունը զեպի արվեստը, «Մերան մեծ է ժողովրդի հետաքրքրությունը զեպի արվեստները,
այնքան մեծ են նրա արվեստապետները: Այս փոխադարձ կապն ու փոխազդեցությունը անսա-
րակապ է իսկական արվեստի անկախության պայմաններում, իսկական արվեստի հանգեզ
անսարակունելի է ժողովրդի ցուցաբերած բուռն հետաքրքրությունը: «Մեր Բենվենետա Չելլինիի
որեւ արձանը ձուլվում էր, — ասում է Երկրամասերի, — ամբողջ Հասարակական հետաքրքրում էր՝
արդյոք պղինձը հաշո՞ղ դուրս կգա: Բայ երբ ստեղծագործողը աչքը հասնում է պատվիրատուին,
արվեստը դարձնում ժամանակի տարիք, հասկանալի է, խոսք չի կարող լինել իսկական ստեղ-
ծագործության, սեպիտանական հղոր արվեստի մասին, «ստեղծագործողը դառնում է Հարպիկ
գործարար, արվեստը փոխարինելով արհեստով, վաճառում ստանդարտիզացված զորք հաշվարկումներով:
կյանքի խոր նշմարությունը՝ պատվիրատուի կամայականությունը:

Երկրամասերի կարապի երգը հանդիսացավ «Վերին շատրվան» (1934) կինոսցենարը,
որ պատկերվում է կապիտալիզմի մաշումուտը, բանվոր դասակարգի պայքարը հանուն ազա-
տության: Նա ցանկանում էր ավարտել նաև «Վարդան Ահրամյան»-ը, գրել «Քառու»-ի երկրորդ
հատորը, պատկերել նավթային բուրժուազիայի ծագումն ու անկումն Անգրեզականում, սակայն
վերահաս մահը անկատար թողնեց նրա իղձերը: Բայց այն, ինչ ստեղծեց ավելի քան կես դա-
րում, խորհրդային Հայաստանում ապրած ասրիներին, դարձավ նրա անունը հաղթանակող
սանատան մի կոթող» (Չարենց), հայ մշակույթի փառապանծ էջը:

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ:

ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ԱՆԻ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Ներկորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1946 թ. Բեյրութում սկսեց լույս տեսնել
«Անի» ամսագիրը: Այն, որոշ ընդհանրությունով, գոյատևեց մոտ տասը տարի, մինչև 1955 թ. և
նշանակալից դեր կատարեց սփյուռքահայ գրական կյանքում: «Անի»-ի առաջին իսկ համարից
զգացվեց, որ ծնունդ է առնում գրականության և արվեստի մի նոր ու լուրջ ամսագիր, որն
ունենա առաջադիմական ուղղություն, կայուն դիմագիծ ու հստակ նպատակ: Ամսագրի խմրա-
գիրը՝ Վահե-Վահյանը, որ մեծ եռանդով ձեռնարկել էր այդ գործին, արդեն ճանաչված բա-
նաստեղծ և հասարակական գործիչ էր սփյուռքահայ մտավոր շրջաններում: Սկսելով ամսագրի
հրատարակությունը, նա խորապես գիտակցում էր այն դերը, որ սփյուռքահայ հասարակական
կյանքը դնում էր ինչպես գրականության, այնպես էլ գրական-գեղարվեստական մամուլի
առջև: «Երականությունը, — գրում էր նա «Սեմին վրա» խմբագրականում, որով սկսվում է
«Անի»-ի առաջին համարը, — կյանքն իսկ է՝ ապրված, ապրվող կամ ապրվելիք, ձևառումը՝
եղածին, խորատեսվածին, կամ տեսլականորեն գուշակվածին, նյութ է, լինելիություն ու վե-
րափոխում: Նա կտրականորեն դեմ էր արտահայտվում բուրժուական խթանների արվեստն
արվեստի համար՝ կամ օանադարտ արվեստի վաղուց սնանկացած, բայց սփյուռքի գաղութ-
ներում դեռևս իր հետևորդներն ունեցող սկզբունքին: Վահե-Վահյանը գրականությունը ևս
դասում էր այն գործունեւրի շարքին, որոնք «կյանքը ձևավորող ուժերն են պարունակում իրենց
մեջ: Գրականությունը, հայտարարում էր նա, կտրված չէ օրնկերությունը (հասարակությունը

Հասարակական հարաբերությունները—(Մ. Բ.) հորինող գործունեներն, այն «բմաճաճ պերճանք չէ, ինչպես թափանցիկ ճարտարանքով մը վարդապետել կփորձեն հողիով աղքատները»։ Շեշտելով, այդպիսով, գրականության կարևոր դերը հասարակության կյանքում, Վահե-Վահյանը նշում էր, որ այդ դերը ավելի է մեծանում այն շրջաններում, երբ պատմական խոշոր իրադարձությունները արմատական փոփոխություններ են մտցնում ժողովրդի կյանքում։ Ուփյուռքահայության համար նորաստեղծ ամսագրի խմբագիրը հշմարացիորեն այդպիսի մի շրջան էր համարում ետպատերազմյան 1946 թ.՝ դանդաղածային ներգաղթի տարին, որը նկայական խանդավառություն էր առաջ բերել բոլոր զաղութներում։ Ահա ինչու Վահե-Վահյանը գրում էր. «Կո հիմնվի «Անի»-ն, որպեսզի հանգրվանային այդ հավատավոր հոգեվիճակը առեն արվեստի պարունակին մեջ, նպաստե հեռանկարավոր ու կենսունակ գրականության մը ձևառումին, և, իր կարգին, ապահովե հայ կյանքին՝ բարիքը այդ գրականության»։

«Անի»-ն գրական-գեղարվեստական լայն ընդգրկման ամսագիր էր, նրան աշխատակցում էին գրողներ, գրականագետներ ու արվեստագետներ հայկական բոլոր զաղութներից՝ սկսած Լեռավոր արևելքից մինչև Եվրոպա և Ամերիկա։ Ամսագիրը սիրով իր էջերը նստեցրել է նաև սովետահայ հեղինակներին։

Որպես գրականության և արվեստի ամսագիր «Անի»-ն ուներ ինտելյալ մշտական բաժինները. զեղարվեստական գրականության (չափածո և արձակ), միջազգային գրականության, արվեստի և գրական-ֆենադատական։ Այս վերջինը բավականին ընդարձակ էր, մասնավորապես նկատի ունենալով և այն բազմաթիվ գրախոսականները, որ ամսագիրը առանձնացրել է զբաղված ընթերցողից, բայց փաստորեն նրա մի օրդանական մասն են կազմում։ Ամսագիրն առավելապես այդ բաժնի միջոցով է արտահայտել իր գրական-գեղարվեստական նայացքները, իր վերաբերմունքը հասարակական մտքի, փիլիսոփայության, արվեստի և շատ այլ հարցերի նկատմամբ, պայքարել հակազեղադիտական, հետադիմական գրական շոտանքների և թշնամական հարձակումների դեմ, պրոպագանդել ռեալիզմը գաղութահայ մտավորական շրջաններում։

«Անի»-ն շատ կարևոր դեր էր հատկացնում գրականությանն ու առհասարակ արվեստին՝ հասարակական կյանքում։ Այդ թեման բազմիցս քննարկվում էր ամսագրում տարբեր առիթներով և զանազան ասպեկտներով՝ թե՛ գրական-բանասիրական հոդվածներում և թե՛ գրախոսականներում։

Բրական մի շարք ընդհանուր և սկզբունքային խնդիրներ արծարծված են ինչպես ամսագրի խմբագրական հոդվածներում, այնպես էլ այլ նյութերում։ Այդ խնդիրներից կարևորագույնները գրականության նյութի (բովանդակության) ու դերի (գաղափարայնության) հարցերն էին, որոնք երկուսն էլ հասունացել ու իրենց լուսարանումն էին պահանջում հայ գաղութներում ստեղծված նոր իրադրության պայմաններում։ Անցյալի մասին շատ էր գրվել։ Անցյալը «երեկը».—ինչպես ասում էր «Անի»-ն) իր տեղն էր պահանջել գրականության մեջ և ստացել էր այն։ Գրականությունը կատարել էր իր պարտքը, ստեղծվել էին գեղարվեստական տարբեր արժեք ներկայացնող արձակ և չափածո գործեր, որոնցում արտացոլվել էին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցած հայկական կոտորածների պատկերները և հայ ժողովրդի բեկորների կյանքը արտասահմանյան աարերը գաղութներում։ Այժմ կյանքը պահանջում էր գրականությունից՝ պատկերել գաղութահայ աշխատավորների ներկան, իսկ այն արդեն սերտորեն շաղկապվել էր ժամանակի սոցիալական կյանքի և հայրենիքի հետ։ Նրանով էր լեցուն, նրանով էր ապրում։ Ամսագրի երկրորդ տարեշրջանի առաջին համարի խմբագրական հոդվածում Վահե-Վահյանը, անգրագառնալով արդիականության հարցին դրականության մեջ, գրում էր. «Արդ, եթե ընկան, կարելի, արդար և ընդունելի էր այդ պահանջը և երևին հաշվույն, ինչու առնվազն նույնքան ընկան, կարելի, արդար և ընդունելի չլլա նման պահանջը մը մեր այսօրին հաշվույն։ ...Եթե ցավը, տխրությունը, անհուսությունը, մրդաձավանքը, վախը, իրավ բաներ էին երեկ մեր կյանքին մեջ, և արժանի գրականություն բերվելու... այսօր, մեր կյանքին մեջ, նույնքան իրավ և շատ ավելի գեղեցիկ բաներ են ազատ ու բարգավաճող կյանքով հայրենիքի մը պատկերը, հավատավորությունը, պայծառությունը, խիղախությունը, վերականգնած արժանավորությունը, կյանքին ու մարդոց սիրովը բաբախում առուգությունը. հետևարար, նույնքան և շատ ավելի արժանի՝ գրականություն բերվելու...»։

Սվ ամսագիրը, իր կարողությունների սահմաններում, քիչ դործ չկատարեց «հեռանկարավոր ու կենսունակ գրականության մը ձևավորումին» նպաստելու գործում։ Այդ մասին են

2 «Անի», 1946, № 1։

3 «Անի», 1947, № 1 (13)։

վկայում ամսագրում տպագրված և՛ չափածո ու արձակ գրվածքները, որոնց մեծ մասի թեման արդիականությունն է, ներառյալ նաև սովետահայ հեղինակների գործերը, և՛ գրական-բնագատական հոդվածներն ու բաղմաթիվ գրախոսականները, որոնց մեջ բնագրավող հարցերը ևս սերտորեն առնչվում են արդիականության հետ:

Նրկրորդ կարևոր խնդիրը, որ բարձրացնում և սկզբունքային հողի վրա էր գնում ամսագիրը, ինչպես ասացինք, գրականության կատարելիքի գերի հարցն էր: «Անիս-ն» կտրականապես մերժում էր «արվեստը արվեստի համար» սկզբունքը և նրա հետևորդներին անվանում «գաղափարական դատարկությունը շրագարդող աճաբարներ»: Նրանց մի մասի համար դա հասարակական ակտիվ կյանքից սեփական անձուկ ներաշխարհը հեռանալու մի ձև էր, ուրիշների համար՝ նահանջի միջոց առաջադիմական, հեղափոխական գաղափարների առաջ: Այդ ուղղության ծայրահեղ աջ թևը «դաշնակցության բացասական գաղափարաբանության ավազուտոր մխրճված գրողներն» էին, ինչպես ասում է Ա. Անդրեասյանը⁴, որոնք, կորցնելով բոլոր հեռանկարները, ժխտում էին ամեն բան, ինչ առաջադիմական էր, և, մանավանդ, Սովետական հայրենիքի հոյակապ իրականացումները, այդ թվում և սովետահայ գրականության նվաճումները: Ձախակցելով արևմտյան հետադիմական գաղափարախոսությանը, նրանք սովետահայ գրականությունը (և սովետական գրականությունն ընդհանրապես) մեղադրում էին միտումնավորության մեջ: «Չգտումնավոր (միտումնավոր) գրականություն» պիտակի տակ նրանք ժողովում էին ժխտել սովետական գրականության առաջադիմական գաղափարները և անջատել սփյուռքահայ ընթերցողներին այն լուսավոր մտքերից ու պայծառ լավատեսությունից, որ բովանդակում են իրենց մեջ մեր գրականության լավագույն երկերը:

Ահա ժխտողական այդ միտումների և հետադիմական անմտությունը պայքարի դեմ է, որ բարձրացնում էր իր ձայնը «Անիս-ն», պաշտպանելով ու պրոպագանդելով գրականության գաղափարայինությունը:

«Չգտում». Սատանան տանի բոլոր սալոնական վեճերը:

Եթե հոգիիդ մեջ կը լեցվին ալիքները ժամանակիդ մտածողության, բու սեփական մտածումներդ՝ մտածումներն են նաև բու ժամանակիդ:

Եթե սիրտդ կը տրոփե կշռույթովը ժողովրդիդ սիրտին, բու սեփական հուզումներդ՝ հուզումներն են նաև բու ժողովուրդիդ:

Ու երբ կը խոսիս դուն, բու ձայնիդ մեջ կա ձայնը բու ժամանակիդ ու ժողովուրդիդ: Եվ ժամանակն ու ժողովուրդը երբևէ չեն պատահականություններ—անիմաստ ու անձողտում, գաղափարական ներուժուն զուրկ գոյություններ⁵: Այսպիսի կրթությունամբ էր հարձակվում «Անիս-ն» «մարտը արվեստի» տեսության կողմնակից, «իմացական սնանկություն» տառապող եղկելիներուն» դեմ, պաշտպանելով արվեստի առողջ գաղափարայինության սկզբունքները: Դրականության և արվեստի հասարակական, սոցիալական էությունն ու նրանց «միտումնավոր» բնույթն էր շեշտում և Ա. Անդրեասյանը, երբ գրում էր. «Ոչ ոք... կրնա ժխտել, թե գրականության բարձրագույն, աղնվագույն ու զեղեցկագույն արտահայտություններն են պրոպագանդի հորդ ու անսպառ աղբյուրներ եղած են, սկսյալ Աստվածաշունչն և հունական ու հայկական ոսկեդարյան գործերն մինչև «Նարեկ» և «Աստվածային կատակերգություն», «Օթելլո» և «Դրախտ կորուսյալ», «Դոն Գիշտ» և «Մարդկային կատակերգություն», մինչև «Պատերազմ և խաղաղություն», «Դավիթ Դուպերֆիլդ» և «Ամերիկյան ողբերգություն մը», «Մայրը» և «Ժան Քրիստոֆ»...⁶:

Ամսագիրը կարևոր նշանակություն էր տալիս ճշմարիտ ստեղծագործության և առաջավոր գաղափարների միջև եղած սերտ կապի հարցին: Այդ տեսակետից ուշագրավ է Ա. Անդրեասյանի «Դրական» ու բացասական գրականության մեջ» հոդվածը, չեղինակը պարզացնում է այն միտքը, թե հասարակության բացասական (հետադիմական) ուժերի գաղափարախոսության հետևորդները արվեստի ճշմարիտ ու վսեմ գործեր ստեղծել չեն կարող: Նշելով այն ուղղակի կապը, որ կա հասարակական կեցության ու մտածողության և արվեստի ստեղծագործության բովանդակության ու ոգու միջև, հեղինակը հանգում է այն եզրակացության, թե որդերից կրժողոված ու գոսացած ծառը հյուսելի պտուղներ տալ չի կարող: Իր այս միտքը Ա. Անդրեասյանը փաստում է թե՛ գաղութահայ և թե՛ համաշխարհային գրականությունից բերված

⁴ Անդրեասյանի Անդրեասյան, Դրականն ու բացասական գրականության մեջ, «Անիս», 1952, Ա 1 (49).

⁵ «Անիս», 1946, № 7.

⁶ «Անիս», 1946, № 5.

մի շարք օրինակներով: «Խորհրդային Միության հեղինակները,—գրում է ամսագիրը մի այլ առիթով⁷,—վտարած են բուրժուական այն նյութերը, որոնք անկումի, բարոյաբուժի, անբարոյականության, տգեղության, մոլություն, ցոփության, ձանձրության ու հետադիմության կը մղեն մարդու: Լենինը կը հավատան, հոյակապ ինքնագիտակցությամբ ժր, թե զբաղետը (գրողը—Մ. Բ.) մաքուրն ունի կուրտիլու կոնում ունի: Եվ այս բմբունումը կը ցավ տալ, հակառակ թաղքենի «դասական» կեղև ստացած կարծիքին՝ գրական, նկարչական ու թանգակագործական այնպիսի երկեր, որոնք ունին առիներն իսկ հմայքը, հուզելու ուժը, ապրելու, տեղի ու հատկություններ: Լեյսպիտով, «Լենին»-ն վճռականորեն կանգնում է արվեստի գաղափարայնության դիրքերում և պաշտպանում ու պրոպագանդում ունի իր, պայքար մղելով ապաքաղաքական «մաքուր արվեստի» ու նրա այլևայլ արտահայտությունների դեմ:

Նշելով իր հիմնական սկզբունքներից, ամսագիրը որոշակի պահանջ էր ներկայացնում նաև քննադատությանն ու քննադատին: Քննադատը պետք է «խոր հասկացություն ունենա՝ անհատը և ընկերությունը վարող տնտեսական ու բարոյական ուժերուն,—գրում էր «Լենին»-ն,—տրպեսողի կարենա բմբունել ու բացատրել գեղարվեստական երկի մը պատկերացուցած նկարագիրներն ու միջավայրը: «Լենին»-ն ժխտական գիրք է բունում «անցյալը իրեն առանցք դարձուցած» գաղութահայ քննադատության հանդեպ, ըստ որի՝ «գրական գործի մը արժեքը այնքան բարձր կնկատվեր՝ որքան սեփական կերպով կը պատկերացնեն ան մեր ծննդավայրին երեկը»:

Տրամագծորեն այլ էր քննադատության սկզբունքը «Լենին»-ում: Նա ետ չէր նայում, այլ ուղղում էր իր հայացքը դեպի գալիքի հորիզոնները: Ամսագիրը չէր ժխտում մեր երեք և ոչ էլ հրաժարվում անցյալի ժառանգությունից: Նրա նպատակը «հեռանկարավոր ու կենսունակ գրականության մը ձևավորումին» նպաստելն էր, գրականություն, որն արտացոլեր գաղութնությունում ապրող հայության կյանքն ու մտորումները, նրա առաջադիմական ձգտումները, նրա սերը հարադատ մշակույթի ու հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հանդեպ: Հատկանշական է, որ ամսագիրը վճռական դիրք է բունում նաև շեղություն դեմ: «Չարիքին շամակերպի իրերը...»,—հայտարարում է նա:—Մնալ արթուն պահակը՝ միտքի և հոգիի մեր հարստության, ու թույլ չտալ որ մեր գրականությունը վերածվի սև շուկայի, ուր անպատիժ տիրակալեն հայ գիրքին ու խոսքին շարաշահները⁸:

Ուշի-ուշով հետևելով սփյուռքահայ գրական-գեղարվեստական կյանքին, «Լենին»-ն արձագանքել է ամեն մի նոր երևույթի, անդրադարձել քիչ թե շատ ուշագրավ երկերի երևան գալուն: Նա հանդես էր բերում անհանդուրժողականություն գաղափարադուրկ և արվեստի տեսական տիպ թույլ ու ապաշնորհ գործերի նկատմամբ: Հաճախակի անդրադառնալով գրական վարպետության հարցերին, «Լենին»-ն պաշտպանում էր ձևի և բովանդակության միասնության սկզբունքը: «Առանց այդ երջանիկ համեմատության, կարելի չէ երևակայել գործ մը որ իրավունք ունենա արվեստի հավակնություն սնուցանելու»,—գրում է Վահե-Վահանը¹⁰, ընդ որում՝ և այդտեղ, և՛ ուրիշ նման դեպքերում միշտ շեշտը դնելով բովանդակության հասարակական հնչեղության վրա¹¹: Լեյսպիտով գրական երկի անբաժանելի մասն է. նա է, որ որպես սրտի տրոփ, որդես հուզում շունչ է տալիս գաղափարներին: «Ճշմարտությունը դավանված գաղափարները — գրում է ամսագիրը,— հարկ է որ գան գրականության իրեն կյանք, ոչ իրեն խոսք», որը կարող է հրապարակագրություն ստեղծել, բայց ոչ՝ գեղարվեստական երկ¹²:

Ամսագիրը կարևոր նշանակություն էր տալիս ճշմարտին ու ճշմարտացիությանը գեղարվեստական երկում: Նոանք իրենց սրինական տեղն ու իրավունքն ունեն արվեստի մեջ, և դրանք խախտելը անհետևանք չի անցնում: Բացասաբար է վերաբերվում «Լենին»-ն ճշմարտացիի խախտումներին նաև «մանրամասնություններում»: Նա, օրինակ, հանդիմանում էր Հր. Զարգարյանին, որ վերջինս իր «միջաշնակ, խարտյաչ» հերոսուհուն, որպես հակակրակի արտահայտություն, գրքի վերջում դարձնում է «կարճահասակ հրեշ»: Ամսագիրը չի ժխտում հեղինակի իրավունքը՝ համակրելու կամ հակակրելու իր ստեղծած դրական կամ բացասական հե-

⁷ Ս. Մ. Շահապաղ, Նյութը և ձևը գրականության մեջ, «Լենին», 1947, № 5:

⁸ «Լենին», 1948, № 9—10 (21—22):

⁹ «Լենին», 1948, № 1 (25):

¹⁰ «Լենին», 1946, № 2:

¹¹ Տե՛ս Հր. Զարգարյանի «Ողբացող մարդիկ» վեպի առթիվ Վ. Վ.-ի դրախտականը, «Լենին», 1954, № 3 (63):

¹² «Լենին», 1947, № 11:

րոտներին. «Թող հստակորեն ըսված լիլա, թե ոչ միայն չենք ժխտեր արվեստագետին հարումներ ու մերժումներ ունենալու իրավունքը, այլև կը պահանջենք զայն»¹³։ «Անի»-ն դեմ էր այդ սկզբունքի դոկտրինային ըմբռնմանը՝ Նա պահանջում էր, որ երկի գործող անձնավորությունները «իրենց ընթացքովը, գործերովն ու խոսքերովը հայտնարեն... ատաղձը իրենց հոգիին»¹⁴։ Հեղինակի ուղղակի, անսրող միջամտությունը և թշնամական կամ բարյացակամ բացարձակ վերաբերմունքը որևէ երևույթի կամ գործող անձի նկատմամբ կեղծիք է մտցնում դրական ստեղծագործության մեջ և իր էությունը հակադրարվեստական է։

Նույն խոտապահանջությունն էր ցուցաբերում ամսագիրը Նաև դեղարվեստական երկի լեզվա-ոճական հարցերը քննարկելիս։ Գրականությունը, որպես խոսքի արվեստ, պետք է ունենա պատկերավոր, արտահայտիչ ու ձկուն լեզու, մշակված ոճ։ Ամեն մի անփութություն լեզվի նկատմամբ հարված է երկի գեղարվեստականությանը։ Այդ չափանիշներով էր մոտենում «Անի»-ն այն բոլոր գործերին, որոնք գրախոսվում էին ամսագրում, առանց խնայելու հեղինակությունները։ Խիստ քննադատության էր ենթարկում «Անի»-ն կեղծ հոնտորականությունը, վերամբարձ ոճը գեղարվեստական ստեղծագործության մեջ, «ճապաղած երկարաբանությունները»։ «Հասարակական բովանդակությամբ քերթվածներու մեջ մասնավորաբար,—գրում էր ամսագիրը,—հոնտորությունը կը փորձվի երբևէն փոխարինել չրարբր, որ չի փոխարինվի»¹⁵։ «... Ուռուցիկ ճարտասանությունը,—գրել է «Անի»-ն մեկ ուրիշ առիթով,—զաղափարական շփոթությունը պերճաշուք դարձվածքներով բողարկելու անգութ փորձ մըն է»¹⁶։ Ամսագիրը գրողներին զգուշացնում էր օտարաբանություններից, չափի կամ հանդի կարիքները գոհացնելու համար «պաշտոն ու պարտականություն չունեցող» բառերի գործածությունից, «իրենց մասկանացուն շատոնց կնքած կարգ մը բառեր վերստին կյանքի կոչելու» փորձությունից և այլն։

«Անի»-ն ուշադիր ու հոգատար վերաբերմունք է ցույց տվել երիտասարդ գրողների նկատմամբ։ Արվեստը, գրում էր ամսագիրը, ինքնանպատակ պերճանք չէ, այլ «կենսական արարք», որ զաղափարի ու գեղեցկության իդեալներով առաջնորդում է մարդկանց «իրենց լինելիության վեմ իրագործումին»։ Այստեղից էլ հետևում է, որ արվեստը «պարտավոր է լիլալ ժողովրդական, կյանքին բխած ու կյանքին վերադարձող, զայն լուսավորելու, գորացնելու շնչով մը»¹⁷։ Այս հիմնական միտքն էր, որպես պահանջ, ամսագիրը ներկայացնում էր երիտասարդ գրողներին։ Նա խրախուսում էր երիտասարդ հեղինակների երկերում այն կենդանի հետաքրքրություններ, որ հանդես էին բերում նրանք դեպի հասարակական կյանքը։ Բնահատելով երիտասարդ գրողների հայրենասիրությունը և մերժելով այդ զգացմունքի նեղ, ազգայնական ըմբռնումը, «Անի»-ն միաժամանակ ժխտում էր կոսմոպոլիտիզմը՝ որպես «վատառողջ ու բայրայամաս մտայնություն»։ «Երազն ու երգն պարպված տղա մը հանկարծ,—գրում էր ամսագիրը, հեղինակով կոսմոպոլիտ հեղինակին,—չես գիտեր որ հոգին վրա բուսած, կը հռչակե ինքզինք Բանահայրենիք ու կելլե մանկու անկարելի երգը իր գնչու հոգիին»¹⁷։

Վերլուծելով երիտասարդ հեղինակների ստեղծագործությունները, ամսագիրն արել է ուշագրավ դիտողություններ ու տալիս առիթներով մի շարք խորհուրդներ տվել նրանց, որոնք ընդհանուր գծերով հանգում են հետևյալի. անհատին դիտել որպես հավաքականության անդամ, որպես հասարակական մարդ. շրջանալ հուզումների ու խոհերի վրա, որոնք դեռ չեն հասունացել արվեստի համար. դիտել, զգալ, մտածել, մանավանդ՝ երազել, չգրել առանց ներշնչման հրամանի. հեռու մնալ ամեն գնով նորություն փորձելու մոլորությունից, դյուրին ձևերի հրապույրից. խուսափել իմաստի տարտամությունից և այլն։ Պահանջների այս կոմպլեքսն ուշադրավ է այն տեսակետից, որ բացահայտում է ամսագրի պաշտպանած գրական-գեղարվեստական հայացքները, համերաշխ է նրա ընդհանուր սկզբունքներին։

Երականության և ընդհանրապես արվեստի հարցերին նվիրված տեսական և քննադատական նյութերը չեն սպառվում ամսագրի գրական-քննադատական բաժնով։ «Անի»-ն բազմիցս անդրադառնում էր այդ հարցերին Նաև իր մյուս բաժիններում գետնելված նյութերում։

«Անի»-ն նշանակալից դեր կատարեց դրական առաջավոր մտքերի տարածման գործում՝ սփյուռքահայ դրական միջավայրում և յայն աշխատանք տարավ սովետահայ գրողների ստեղծագործությունների ժողովրդականացման գործում։ Հասկապես նշանակալից է ամսագրի դերը

¹³ «Անի», 1954, № 3 (63)։

¹⁴ «Անի», 1948, № 12 (24)։

¹⁵ «Անի», 1952, № 8 (56)։

¹⁶ «Անի», 1949, № 11 (35)։

¹⁷ «Անի», 1954, № 4 (64)։

ռեալիզմի պաշտպանության ու արմատավորման գործում սփյուռքահայ նոր գրականության և, մասնավորապես, գրողների նոր սերնդի մեջ՝ ժենիս-ն չերմ ընդունելություն գտավ թե՛ սփյուռքահայ և թե՛ սովետահայ ընթերցողների շրջանում և իր որոշակի հետորր Պողեց հայ գրական մամուլի պատմության մեջ:

Մ. ԲԱՐՍԵՅԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՍՏՐԱՆԱՆԻ ՀԱՅՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԻՔԻ

Աստրախանի հայկական Դատաստանագրքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս մեզ պարզ պատկերացում կազմելու հայկական գաղութներում ստեղծված դատական որդանների գործունեության ու դատավարության ամբողջ ընթացքի մասին: Դատաստանագրքից պարզ երևում է, որ հայկական գաղութներում դատական ամբողջ գործը գտնվել է դատարանի ձեռքին, պաշտոնական գաղութներից բացի ուրիշ ոչ ոք իրավունք չուներ դատ վարելու:

Դատավարությունը կարգավորող հոդվածների ուսումնասիրությունից երևում է, որ այն իր մեջ ընդգրկում էր հետևյալ տարրերը.

1. Կողմերի, այսինքն՝ ըստ Դատաստանագրքի՝ դատախազի և պատասխանողի ներկայության անհրաժեշտությունը:

2. Դատավարության բուն պրոցեսը, այսինքն՝ «ապացուցութուն բանից», ինչպես դատախազի, այնպես էլ պատասխանողի համար:

3. Վճռի կաշառումը, կամ ինչպես Դատաստանագրքում է ասված՝ «կարգադրություն դատաւորաց և լուծումն դատաստանական արարեալ այլը ազադաւ» (Դատաստանագրք, մասն Գ, գլ. 1-ին, հոդ. 2):

Այժմ սրանցից յուրաքանչյուրը քննենք առանձին-առանձին:

Համաձայն Աստրախանի հայոց Դատաստանագրքի, կողմերը կոչվում են դատախազ և պատասխանող: Դատախազը, ներկա իմաստով, հայցվորն է, իսկ պատասխանողը՝ ամբաստանյալը: Դատաստանագրքի այս հոդվածի վրա զգացվում է սուսական իրավունքի որոշակի ազդեցությունը¹: Կողմերը (истец и ответчик) այդպես էին կոչվում նաև Ալեքսեյ Միխայլովիչ ցարի (1645—1676) 1649 թ. հրատարակած օրենքների ժողովածուի մեջ²: Համանման ձևով են ընդգրկված կողմերը նաև 1716 թ. մարտի 30-ի օրենքում³:

Համաձայն Դատաստանագրքի, դատախազ չէին կարող լինել որդիները ժողովների գնմ և հակառակը, ծառաները տերերի գնմ, անգամ ծառայական փնակից ազատվելուց հետո էլ, կինը ամուսնու գնմ և հակառակը, բացառությամբ անբարոյականությանը վերաբերող մեղքի: Սակայն բրեժնեյի աշխարհի հանցանքների դեպքում, երբ գրանք ուղղված են արքայի և սուլթանի գնմ, վերահիշյալները կարող էին լինել դատախազ:

Քյուզանդական օրենսդրության մեջ նույնպես ասված է, որ «ծնաւոր և որդիք գոր ինչ ի վերայ միմեանց ասեն մի՛ ընկալչուք և մի՛ զոր տէրանց ծառայ կամ տնազատ վկայեսցէ»: Աստրախանի կրթական ընթացքում ասանձին հարցերի մասին խոսելիս զուգահեռ ենք անցկացրել Աստրախանի և Փոշի դատաստանագրքերի, ինչպես նաև ժամանակին Ռուսաստանում գործող օրենքների և Քյուզանդական օրենսդրության միջև, ցույց տվել Աստրախանի դատաստանագրքի կրած ազդեցությունն ու ինքնությունը:

¹ Եւրազիական ընթացքում ասանձին հարցերի մասին խոսելիս զուգահեռ ենք անցկացրել Աստրախանի և Փոշի դատաստանագրքերի, ինչպես նաև ժամանակին Ռուսաստանում գործող օրենքների և Քյուզանդական օրենսդրության միջև, ցույց տվել Աստրախանի դատաստանագրքի կրած ազդեցությունն ու ինքնությունը:

² М. Н. Тихомиров, П. П. Епифанов, Соборное уложение 1649 г., М., 1961, гл. X, հոդվ. 3, 4, 103, 105, 108, 109, 114, 115, 118, 119 և այլն:

³ «Свод законов Российской империи», 1857, т. X, ч. II, № 160.

⁴ Մատենադարան, ձեռ. № 778, քղթ. 343ա, հոդ. Բ, ձեռ. № 8926, քղթ. 351, հոդ. Բ, և նաև նաև «Соборное уложение 1649 г.», гл. 22, ст. 6, гл. II, ст. 13, СЗР, 1857, т. X, ч. II, № 175.